

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համակարգող  
խորհուրդ ձևավորելու մասին

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանը՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի Վայքի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը (այսուհետ՝ ՍԱՏԳ) սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կողմեր) հրավիրում է հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է Խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը Խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները (հայտերը) կարող են ներկայացնել Վայքի ՍԱՏԳ:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

1. Սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ:
2. Սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրում:

Հայտագրման վերջնաժամկետն է 2018թ. մարտի 5-ը:

Հասցե Վայոց ձորի մարզ, ք Վայք, Շահումյան 14

Հեռ.՝ 028221362

Վայքի ՍԱՏԳ